



ArmEIA

Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի «Զրվեժ»
արգելոցապարկային համալիրի «Զրվեժ» անտառապարկի
տարածքում հանգստի գոտու կազմակերպման շրջակա
միջավայրի վրա ազդեցության լրամշակված նախնական
գնահատման հայտ



Ձեռնարկող՝ «ԲԵՔՏԵՅՉ» ՍՊԸ



Մշակող՝ «ՆՈՎԱԼ» ՍՊԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն-----	էջ 4
2. Օգտագործվող հապավումներ-----	էջ 5
3. Հավելվածներ -----	էջ 5
4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը-----	էջ 5-9
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացների վերաբերյալ-----	էջ 9
6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը-----	էջ 11
7. Նախատեսվող գործունեության նպատակը -----	էջ 11
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը-----	էջ 11
8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածք -----	էջ 12
8. Իրադրության սխեմաներ -----	էջ 14
8. 1 Հատակագիծ-----	էջ 17
9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի և շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը-----	էջ 23
9.1 Տարածաշրջանի նկարագիրը-----	էջ 23
9.2 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ -----	էջ 26
9.3 Կլիման և օդային ավազանի իրավիճակը -----	էջ 27
9.4 Հողային ռեսուրսներ -----	էջ 30
9.5 Ջրային ռեսուրսներ -----	էջ 31
9.6 Համայնքի և անտառպարկի կենսաբազմազանություն-----	էջ 32
Բուսական աշխարհ-----	էջ 32
Կենդանական աշխարհ-----	էջ 39
9.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ-----	էջ 44
9.8 Հատուկ պահպանվող տարածքներ-----	էջ 44
10. Նախատեսվող գործունեության բնութագիրը-----	էջ 45

11. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ-----	էջ 46
11.1 Արտադրական հզորություններ և նախատեսվող գործողություններ-----	էջ 46
11.1.1 Գործունեության իրականացման ժամանակացույցը-----	էջ 50
11.2 Օգտագործվող բնառեսուրներ և նյութեր-----	էջ 52
11.3 Կեղտաջրերի հեռացում-----	էջ 54
11.4 Հողային ռեսուրսներ -----	էջ 55
11.5 Բուսական և կենդանական աշխարհ -----	էջ 55
11.6 Թափոնների առաջացում-----	էջ 56
11.7 Սոցիալական -----	էջ 56
11.6 Բարեկարգում -----	էջ 57
11.7 Ոռոգում-----	էջ 60
12. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր-----	էջ 61
12.1.Օդային ավազան-----	էջ 62
12.2.Հողային ռեսուրսներ-----	էջ 62
12.3. Ջրային ռեսուրսներ-----	էջ 63
12.4. Կենսաբազմազնություն-----	էջ 63
12.5 Թափոններ-----	էջ 64
12.6 Աղմուկ և թրթռում-----	էջ 64
12.7 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն-----	էջ 65
12.8 Սոցիալական-----	էջ 66
12.9 Բարեկարգում-----	էջ 69
Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան-----	էջ 67
Գրականություն-----	էջ 78

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի «Ջրվեժ» արգելոցապարկային համալիրի «Ջրվեժ» անտառապարկի տարածքում հանգստի գոտու կազմակերպում
Ձեռնարկող	«ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Կոմիտաս 24/3 բն.29
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	«Ջրվեժ» արգելոցապարկային համալիրի «Ջրվեժ» անտառապարկի տարածք
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	avetis@backstage.am հեռ. 093/07-17-10
Պատվիրատու	«ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, «Ջրվեժ» անտառապարկի տարածք
Աշխատանքային նախագծի մշակող	«ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊԸ
Գնահատման հայտի նախագծող	ArmEIA «Նովալ» ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բրյուսովի 6 (012)21-10-01, (093)39-77-60 arm_eia@outlook.com

2. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ԲՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածք

ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ԲՀՊՏ՝ Բնության հատուկ պահպանվող տարածք

3. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականները

Հավելված 2. «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի վարձակալության պայմանագիրը

Հավելված 3. Էներգամատակարարման պայմանագիրը

Հավելված 4. Ջրվեժ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը

Հավելված 5. Մաքրման կայանի գծագիրը

Հավելված 6. Դենդրոնախագիծ

Հավելված 7. Տարածքում առկա ծառեր

Հավելված 8. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկը

4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ **օրենք** (2014)–կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի

իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) - կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) –սահմանում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման եվ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

ՀՀ կառավարության որոշումներ

❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:

❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

❖ **ՀՀ կառավարության 24. 12. N1793-Ն որոշում՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կոտայքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

❖ **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին պատկանող «Զրվեժ» անտառապարկի տարածքում տուրիստական, կորպորատիվ միջոցառումների համար նախատեսված տարածքում հանգստի գոտու կազմակերպում նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության ենթակա է Գ կատեգորիայի ընթացակարգով, այս դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է՝

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.
- 4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.
- 6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Նախնական գնահատման հայտի հիման վրա, Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ ձեռնարկողին տրամադրվում է եզրակացություն:

Հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան՝ Զրվեժ համայնքապետարանում՝ «Zoom» էլեկտրոնային համակարգով: Գործունեության վերաբերյալ համայնքը դրական է արտահայտվել:

6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.

«Ջրվեժ» անտառպարկի տարածքում հանգստի գոտու կազմակերպումն իրականացնում է «ԲԵՔՄՏԵՅՁ» ՍՊ ընկերությունը, որի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Կոմիտաս 24/3 բն.29: Աշխատանքային նախագիծը ևս մշակվել է «ԲԵՔՄՏԵՅՁ» ՍՊ ընկերության կողմից:

7. Նախատեսվող գործունեության նպատակը.

«Ջրվեժ» անտառպարկի տարածքում հանգստի գոտու կազմակերպման նպատակն է ստեղծել ոչ ստանդարտ ֆունկցիոնալ տարածք՝ տուրիզմի և զբոսաշրջության զարգացման, մասնավորապես էկոտուրիզմի, խրախուսական ինտենսիվ տուրիզմի, բիզնես տուրիզմի և այլ հանգստի գոտուն բնորոշ միջոցառումների անցկացման համար:

Տարածքի տեղադիրքը, ճարտարապետական լուծումները հնարավորություն կստեղծեն, թե զբոսաշրջիկներին և թե տեղացիներին իրենց հանգիստը և միջոցառումները կազմակերպել նշված տարածքում:

Համաձայն «Ջրվեժ» Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրության՝ թույլատրելի է տարածքում կազմակերպել բնակչության մասսայական հանգիստը (ամենօրյա) և զբոսաշրջություն (այդ թվում՝ էկոզբոսաշրջություն) և դրանց հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում:

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Ջրվեժ համայնքի վարչական տարածքում: Ջրվեժ համայնքը գտնվում է Երևան քաղաքի անմիջական մոտակայքում՝ հյուսիս-արևելյան մասում, Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում:

Ջրվեժ գյուղը պատմականորեն ձևավորված բնակավայր է: Այն հիշատակվում է V դարից: Բնակավայրին բնորոշ են նեղլիկ, ծուռումուռ փողոցները և մեկ-երկու հարկանի ցածրահարկ բնակելի կառուցապատումը: Դեռևս խորհրդային տարիներին գյուղին կից տեղակայվել են

արտադրական ձեռնարկություններ, որոնց շուրջ կազմավորվել է խոշոր բնակելի բնավանդ (ա.կ. միկրոշրջանը)՝ իր ենթակառուցվածքներով (դպրոց, մանկապարտեզ, խանութներ և այլն): Թեև վերը նշված տարածքներն, այսօր չեն մտել համայնքի վարչական տարածքի մեջ, դրանք համայնքում կենտրոնական դիրք են գրավում, կարևոր տեղ զբաղեցնելով բնակավայրի կենսագործունեության մեջ:

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղական համայնքի տարածքով է անցնում Երևան-Գառնի-Գեղարդ պատմամշակութային և զբոսաշրջային կարևոր հատակագծային հաղորդակցական առանցքը: Գառնիի ուղղությամբ Ջրվեժ համայնքին սահմանակից է Ջրվեժի ծառաբուծական զբոսայգին: Զբաղեցնելով տարանցիկ դիրք՝ Ջրվեժ համայնքի տարածքը կարևոր դեր է խաղում Երևանի ագլոմերացիայի կազմավորման և փոխկապակցված՝ զարգացման տեսանկյունից: Ներկայումս այն երկայնական և լայնական ուղղություններով ձգված, անկանոն ձևի տարածված հատակագծային կառուցվածքով մի բնակավայր է:

1970-1980 թվականներին Ջրվեժի հյուսիս-արևելյան մասում տեղադրվեցին տարբեր կազմակերպությունների այգեգործական ընկերությունների հողամասերը, որոնք այսօր բավականին մեծ զանգված են կազմում և ընդգրկված են համայնքի սահմաններում՝ որպես բնակավայրի հողեր: Վերջին տարիներին Երևան-Գառնի ավտոխճուղու երկու կողմերում արագ տեմպերով կառուցվում են զվարճանքի և հասարակական սննդի բազմապիսի օբյեկտներ (հյուրանոցներ, խաղատներ, ռեստորաններ, հարսանյաց հանդեսների սրահներ և այլն): Համաձայն գլխավոր հատակագծի՝ բնակավայրը, համայնքի տարածքում հողերի սակավության պատճառով, ներկայումս զարգանում է հիմնականում նախկին գյուղատնտեսական հողերի հաշվին:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է «Ջրվեժ» անտառպարկի» տարածքում, զբաղեցնելով 0,36հա: Իսկ գործունեության հարակից տարածքը, որի վրա ընկերությունը պետք է կատարի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ կազմում է մոտ 1,2 հա:

8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը. Համաձայն շրջակա միջավայրի նախարարության 2019թ. հուլիսի 26-ին Ջրվեժ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի հանձնաժողովի արձանագրության, ինչպես նաև կնքված հողամասի վարձակալության

պայմանագրի՝ «Զրվեժ» անտառպարկ» հիմնարկից Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի, գ. Զրվեժ, Երևան-Գառնի մայրուղի 16/8 հողամաս հասցեում գտնվող 0,09509հա (ծածկագիր՝ 07-057-0411-0010, վկայական N 13052019-07-0106) և Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի, գ. Զրվեժ, Երևան-Գառնի մայրուղի 16/9 հողամաս հասցեում գտնվող 0,26795հա (ծածկագիր՝ 07-057-0411-0009, վկայական N 13052019-07-0107), ընդհանուր՝ 0,36304հա տարածքները, համարելով մեկ ամբողջություն, մրցութային կարգով (10 սեպտեմբերի 2019թ.), 24 տարի ժամկետով հատկացվել է «ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊ ընկերությանը՝ հանգստի գոտի կազմակերպելու նպատակով:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Զրվեժ համայնքից 460մ, Ողջաբերդից՝ 760մ, մայրուղուց՝ 9մ հեռավորությունների վրա: Մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը անտառպարկի տարածքում գտնվող լճակն է, որից գտնվում է 630մ, իսկ իսկ Զրվեժ գետից՝ 2կմ հեռավորությունների վրա: Նախատեսվող գործունեության և դրա հարակից տարածքում գետեր և խորքային ջրեր չկան:

Իրավիճակային հատակագիծ 1.

Նկար 1.



Նկար 2.

Իրադրության սխեմա համապատասխան նշագրումներով



Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը հարակից բնակավայրերից

«Բերստեյջ» ՍՊԸ



0 100 200 մ

Նկար 3.



Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը
H3 (ամենամոտ) ճանապարհից
«Բեքստեյջ» ՍՊԸ




0 10 20 մ

Նկար 4.



Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը
հարակից մակերևութային ջրերից
«Բեքստեյջ» ՍՊԸ



0 0.25 0.5 կմ



Նկար 5.



Նկար 6.

Հատակագիծ (սխեմա) 1.



Jrvezh_16_8.pdf

Հատակագիծ (սխեմա) 2.




Jrvezh_16_9.pdf

Նախատեսվող տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն (վկայականներ՝ N 13052019-07-0106 և N 13052019-07-0107):

Համաձայն «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և ընկերության միջև կնքված պայմանագրի՝ գործունեության ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի հարավ արևելյան հատվածում, Ջրվեժ գյուղի վարչական տարածքում, Երևան Գառնի մայրուղու աջ հատվածում՝ ծովի մակերևույթից 1400-1500մ միջին բարձրությունների վրա: Հողամասի տարածքում գերակշռում են տարբեր հզորություն ունեցող կավային հողերը:

Ընդունման-հանձնման ակտով 0,36304հա վարձակալված տարածքում ընկերությանն են հանձնվել մոտ 136 հատ ծառատեսակներ-կեղծ ակացիա՝ 15 հատ, սոճի սովորական՝ 2 հատ, սոճի դրիմյան՝ 7 հատ, հացենի՝ 19 հատ, թխկի՝ 10 հատ, մասրենի՝ 8 հատ, դրախտաձառ՝ 40 հատ, ճապկի հարավային՝ 20 հատ, ծիրանենի՝ 3 հատ, նշենի կուլտուրական՝ 6 հատ, սզնի՝ 1 հատ, բարդի բոլլեի՝ 5 հատ: **Հավելված 7.**



Նկար 7.



Նկար 8.

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքները գտնվում էին ոչ բարեկարգ և անխնամ վիճակում՝ տեղ-տեղ կուտակված աղբակույտերով:



Նկար 9.



Նկար 10.

«ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊ ընկերության կողմից՝ գործունեության ենթակա և հարակից (12,0 հազ.մ²) տարածքներում արդեն կատարվել են մաքրման, հարթեցման և հողային, ինչպես նաև կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

Վարձակալված և հարակից տարածքներում ընկերության կողմից արդեն կատարվել են.

- հողային աշխատանքներ՝ տեղի բնական քարերով ստեղծվել է հակասողանքային պատնեշ,
- հարակից տարածքում կազմակերպվել է քարահավաք՝ տարածքի հետագա կանաչապատման նպատակով,
- ընդհանուր և բարեկարգվող տարածքների դրենաժային և ռոտզման համակարգերի բարելավում,
- գոյություն ունեցող ծառերի էտում և աղբահանություն,
- տարածքի բարելավվել է տարբեր ծառաթփատեսակներով,
- տնկվել է 355 հատ ծառ,
- վերակառուցվել է անտառի հակահրդեհային նպատակներով օգտագործվող ճանապարհը,
- տարածքում տեղադրվել է նոր ցանկապատ:



Հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի 17.09.2020թ. 29-244 գրությունը՝ «ԲԵՔՍՏԵՅՁ» ՍՊ ընկերության կողմից Երևան-Գառնի մայրուղու 16/8 հասցեում տեղադրվել է նաև հոսանքի լրակազմ (ԼՏԵ-250/10) տրանսֆորմատորային ենթակայան, որն ապահովելու է ողջ հանգստի գոտու էլեկտրամատակարարման կարիքները և հնարավորություն է տալու հարակից տարածքներին ևս ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարմամբ:

9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի և շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը.

9.1 Տարածաշրջանի նկարագիրը: Ջրվեժ գյուղական համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի երեք թաղային՝ Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի համայնքներին և մարզի երեք գյուղական՝ Առինջ, Ձորաղբյուր, Ողջաբերդ համայնքների վարչական տարածքներին: Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 11 կմ է, մարզկենտրոնից (Հրազդան) 45կմ, Աբովյան քաղաքից՝ 9 կմ:

Համաձայն Ջրվեժ համայնքի սոցիալական կայքի տվյալների՝ այժմ համայնքի տարածքը կազմում է 16.46կմ², բնակչությունը՝ 6950 մարդ: Այստեղով են անցնում Երևան-Գառնի մայրուղին և Աբովյան-Մասիս ավտոճանապարհը:

Ջրվեժում ներկայումս տեղադրված են «Գեղարդ» մսամթերքի կոմբինատը, «Գամմա» պահածոյի գործարանը, բետոնի հանգույցը, քարի մշակման և այլ արտադրամասեր: Գյուղին հարակից «Մայակ» թաղամասի հարևանությամբ ժամանակին տեղակայվել էին խոշոր արտադրական ձեռնարկություններ: Վերջինիս նախկին հզորություններն ու տարածքներն, ինչպես նաև վերը նշված արտադրություններն այսօր մասնակի են օգտագործվում կամ ընդհանրապես չեն գործում: Համայնքի աղմուկի հիմնական աղբյուր է ավտոտրանսպորտը, որի մակարդակը կախված է տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունից: Համայնքն ունի բավական մեծ կանաչապատ մակերես, բայց բացակայում են ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները (գրոսայգիներ, պուրակներ):

Համայնքում առկա են ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, կանաչապատման, ճանապարհների ասֆալտապատման և այլ խնդիրներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում մշտապես իրականացվում են բնական էկոհամարագրի, կենսաբազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրություններ և մոնիթորինգ: Դենդրոպարկում և անտառպարկում իրականացվում են արհեստական պայմաններում աճեցված տնտեսական, գեղազարդային և գիտական նշանակություն ունեցող տեղական և ներմուծված ծառաթփային բույսերի կենդանի հավաքածուների պահպանություն, վերարտադրություն՝ ապահովելով նախադրյալներ

բուսականության, բուսածածկության, գեղագարդային այգեգործության և լանդշաֆտային ճարտարապետության բնագավառներում գիտակրթական աշխատանքների իրականացման համար:


Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում է գտնվում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը, որը բնապահպանական, գիտահետազոտական և գիտաճանաչողական կազմակերպություն է: Այն կազմավորվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի թիվ 1046-Ն որոշմամբ: Համալիրը զբաղեցնում է 23449.6 հա տարածք: «Արգելոցապարկային համալ» ՊՈԱԿ-ի կազմի մեջ են մտնում «Էրեբունի» պետական արգելոցը, «Որդան կարմիր» պետական արգելավայրը, «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրը, «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը, Բերդի «Սորանեն» դենդրոպարկը, Իջևանի «Դենդրոպարկ»-ը, Վանաձորի «Սարուխանյան Ժ.-ի անվան» դենդրոպարկերը, «Ջրվեժ» անտառպարկը: «Ջրվեժ» անտառպարկը հիմնադրվել է 1977 թվականին՝ պետական անտառային ֆոնդի տարածքում: Այն գտնվում է Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, Երևան-Գառնի մայրուղու աջակողմյան հատվածում՝ 1400մ բարձրության վրա: Սահմանակցում է Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներին և Երևան քաղաքին:

«Ջրվեժ» անտառպարկի ստեղծման նպատակն էր Երևան քաղաքի էկոլոգիական վիճակի առողջացումը, բնական միջավայրում մարդկանց հանգստի, մշակութային գեղագիտական պահանջների բավարարումը, նպաստելով արհեստական պայմաններում աճեցված տեղական և 100-ից ավելի ներմուծված ծառափային տեսակների (եղևի կովկասյան, սոճի դրիմյան, խեժափիճի սիբիրական, թույա արևմտյանն այլն), պարտեզային ձևերի և դարավանադավորված տեղանքի հետ համադրվող տնտեսական, գեղագարդային և գիտական նշանակություն ունեցող պարկաշինության եզակի նմուշների պահպանությանը, վերարտադրությանը, ինչպես նաև նրանց էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Միաժամանակ անտառպարկը կնպաստի ընտրված և կլիմայավարժեցված լավագույն տեսակների ներդրմանը՝ կանաչ շինարարության տարբեր բնագավառներում: Երեք տասնամյակի ընթացքում ստեղծվել է մայրաքաղաքին մոտ գտնվող գեղագարդ տարածք:

Ջրվեժ համայնքի տարածքում է գտնվում «Ջրվեժ» անտառպարկը, որի տարածքի չափը և սահմանները հաստատվել են ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18 -ի N 684-Ն

որոշմամբ՝ 423.8 հա: Տարածքի որոշակի հատվածը (260հա) անտառապատ է՝ ծածկված հիմնականում արհեստական տնկարկներով: Հայաստանի բնական անտառներից և արտերկրից անտառապարկ են ներմուծվել շուրջ 128 ծառաթփատեսակներ, որոնք ընդգրկված են բույսերի 69 ցեղում և 32 ընտանիքում: Այստեղ հաջողությամբ հարմարվել և աճում են բարձրարժեք գեղազարդիչ տեսակներ՝ եղևնի սովորական, եղևնի փշոտ, սոճի դրիմյան, գիհիների 5 տեսակներ, թույանների 3 տեսակներ 36 տեսակի վարդագգիների ընտանիքին պատկանող բույսեր և այլն: «Ջրվեժ» անտառապարկը միակն է Երևան քաղաքի մերձակայքում և հանդիսանում է քաղաքացիների հանգստի նախընտրելի վայրերից մեկը:

Նկար 12.



Անտառապարկի տարածքի զգալի մասը խոպան հողեր են՝ երկրորդական խոտային բուսական խմբավորումների բազմազանությամբ: Առավել զառիթափ լանջերը չխախտված բնական հանդակներ են՝ շատ թե քիչ լավ արտահայտված առաջնային բուսականությամբ՝ այդ թվում օշինդրային, տրագականտային գազերի ֆորմացիաներ: Առանձին կղզյակներով հանդիպում են հացազգատարախոտային խմբավորումներ՝ վայրի ցորենի մասնակցությամբ:

9.2 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ. Ջրվեժ համայնքի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելյան մասում, քաղաքի մոտակայքում, Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում: Խոշորացված համայնքի (Ջրվեժ, Ձորաղբյուր, Զովք) վարչական տարածքը կազմում է 5490.55 հա, մշտական բնակչությունը 2019թ. տվյալներով կազմում է 10511մարդ: Ջրվեժ համայնքի տարածքում գերիշխում է տափաստանային, իսկ լեռնալանջերին՝ ալպիական լանդշաֆտը, որը ծառայում է որպես արոտավայր: Նախատեսվող գործունեության տարածաշրջանն իրենից ներկայացնում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք տարածվածությամբ կտրտված արտաբերման կոներ: Ընդհանուր առմամբ տարածքն ունի թեք ռելիեֆ: Տարածաշրջանում առկա դարավանդի նստվածքները բաղկացած են խոշոր կոպիճի շերտերից: Կան նաև մեղմաթեք ռելիեֆով, կտրտված ոչ խորը ձորերով տարածքներ: Թեք ու անտառագուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում, ուստի տնտեսական յուրացման համար համեմատաբար դյուրին են:

Համաձայն Ջրվեժի գլխավոր հատակագծի՝ նկատի ունենալով համայնքի տեղադիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները (թույլ բլրակային, միատարր, համեմատաբար հարթ), բուսածածկից ազատ չիրացված տարածքները, նպատակահարմար է Ջրվեժ-Ողջաբերդ գոտին՝ ընդհանուր առմամբ, և մասնավորապես, Ջրվեժի գյուղական համայնքը զարգացնել որպես հանգստի, զբոսանքի, սպորտի և բուժման քաղաքամերձ գոտի՝ մայրաքաղաքի բնակիչների համար: Տարածաշրջանը գտնվում է արարատյան հովտի արևելյան կողմում, որտեղ ձգվում է Գեղամա լեռնաշղթան՝ լավային ծածկությամբ ուռուցիկ-վահանաձև մակերևույթի վրա վեր խոյացող հրաբխային կոներով: Լեռնաշղթան ունի 140 կմ երկարություն, ամենաբարձր գագաթը Աժդահակն է՝ 3597մ: Գեղամա լեռների զառիթափ լանջերը գրեթե ողողամաշված չեն, ինչը բացատրվում է կլիմայի չորությամբ: Լեռների գագաթային մասում հստակ երևում են հնագույն սառցապատումների հետքերը:

Լեռնային գոտու մակերևույթը բավականին բարդ է: Աժդահակի գագաթամերձ բարձրավանդակը կազմված է հրաբխային ապարներից՝ մասնատված բազմաթիվ խորը հովիտներով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն ալիքաձև և սանդղավոր են, կտրտված ժամանակավոր հոսք ունեցող հեղեղատներով, որոնք վարարում են զարնանային ձնհալքերի ժամանակ: Միջին լեռնային մասում գերակշռում են չորրորդային ժամանակաշրջանի

անդեզիտո-բազալտներ և բազալտներ: Դեպի Նորք-Զրվեժ սարահարթ իջնող լեռնալանջերը խիստ մասնատված են՝ էրոզիայի ենթարկված հովիտներով և ձորակային ցանցով, որոնցով ձնհալքի և գարնանային վարարումների ժամանակ հոսում են սելավներ: Դրանց մի մասը իրացնում է Գետառ գետը, իսկ մյուս հիմնական մասը չի առաջացնում մակերեսային հոսք, այլ ներծծվում է: Շատ տեղերում ներծծված ջրերը երկրի մակերես են դուրս գալիս քաղցրահամ ջրերի աղբյուրների ձևով:

Տարածաշրջանում հարթավայրի և նախալեռների կցվանքատեղում հրաբխային ապարները մերկ են և հաճախ հողածածկույթի փոխարեն երևում է հզոր ժայռոտ զրահը: Հրաբխային ապարներն իրենց ամբողջ հզորությամբ պարզորոշ երևում են գետերի կանյոններում: Երևանը հյուսիս արևելքից և հյուսիսից գոտևորող Քանաքեռի բարձրունքը և Նորքի բլրազանգվածը տարածաշրջանում ձևավորում են պլատոյաձև սեղանատիպ զանգված, որը 10-150 թեքվածությամբ աստիճանաբար բարձրանում է մինչև 1250մ բարձրություն, ներառելով Զրվեժ բնակավայրը:

Տարածաշրջանն ունի թեք, տեղ-տեղ մեղմաթեք ռելիեֆ, դարավանդային նստվածքներով, մերկացած հրաբխային ապարներով և ժայռերով: Զրվեժ համայնքը գտնվում է սեյսմիկ միկրոշրջանցման 0,40-0,45g գոտում:

Նախատեսվող գործունեության տարածքում սողանքային գոտիներ չկան:

9.3 Կլիման և օդային ավազանի իրավիճակը: Զրվեժ հանգստի գոտին ունի կլիմայաբուժության համար բարենպաստ պայմաններ: Միկրոկլիմայական և սանիտարահիգիենիկ տեսակետից Զրվեժի տարածաշրջանում ձևավորվում են առավել բարենպաստ ջերմառադիացիոն, խոնավության և աերացիոն պայմաններ (Զրվեժի տարածքում մթնոլորտում թթվածնի պարունակությունը ձմռանը մինչև 8 գր/մ³ ավել է, քան Երևանի կենտրոնում): Տարածաշրջանը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները:

Ձմեռը համեմատաբար կարճ է, չափավոր ցուրտ: Գերիշխում են «չափավոր ցուրտ» եղանակային տիպը, երբեմն էլ տաքացումներով եղանակները: Գերազանցում է անտիցիկլոնային (բարձր ճնշման) դաշտը, որն էլ արտահայտվում է բացառապես անհողմ,

խաղաղ եղանակներով: Նշված իրավիճակն էլ իր հերթին բերում է ենթահինվերսին ամպամածության և մթնոլորտի աղտոտվածության մեծացմանը: Ձմեռը համամատաբար կարճ է, եղանակային ռեժիմը կրում է կայուն բնույթ: Ամառը երկարատև է՝ մայիսի 10-ից մինչև հոկտեմբերը ներառյալ (170 օր): Առանձնանում է «շոգ և չոր» եղանակների զգալի կրկնվածությամբ: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին գերիշխում է «շատ շոգ, շատ չոր» եղանակային տիպը: Ամռան եղանակային ռեժիմը կայուն է, չի խախտվում անգամ հազվադեպ նկատվող ֆրոնտների անցումով: Մթնոլորտային տեղումները նվազագույն են: Այս հանգամանքը նախադրյալներ է ստեղծում Ջրվեժ-Ողջաբերդ սարահարթը համարել բարենպաստ կլիմայական գոտի կլիմայաբուծության կիրառման համար:

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -31°C է: Տարեկան միջին ջերմաստիճանը 9.1°C , իսկ ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը՝ 22.2°C : Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 40°C :

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 65%: Ամենաշատ օդի հարաբերական խտությունը դիտվում է հունվար և դեկտեմբեր ամիսներին՝ 80%:

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 440մմ: Առավելագույնը դիտվում է ապրիլ ամսին՝ 62 մմ, նվազագույնը օգոստոս ամսին՝ 9 մմ:

Մթնոլորտային տեղումները (% /

Զրկեժ	Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը													Տեղումների քանակը՝ միջին ամսական /մմ/				Ձնածածկույթ			
	ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային	Բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթ օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ				
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան								
	2	4	1	2	2	9	8		6	9	6	2	40								
														5	77						

Օդի հարաբերական խոնավությունը, %

Բնակավայր, օդերևութա- բանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Ջրվեժ	80	79	68	63	62	56	50	50	51	64	77	80	65	-	-

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութա- բանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Ջրվեժ	-4.5	-3.5	2.2	9.1	13.8	18	22.1	22.2	17.9	10.8	3.9	-2.5	9.1	-31	40

Ջրվեժ համայնքում հյուսիսից և հյուսիս-արևելքից ամռանը փչում են ուժեղ լեռնահովտային քամիներ: Ցերեկային «շատ շոգ» եղանակների տոթակեզ ռեժիմը մի փոքր մեղմանում է ամառվա սեզոնում այստեղ մշտապես գործող լեռնահովտային քամիների ազդեցության շնորհիվ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերազանցում է անտիցիկլոնային (բարձր ճնշման) դաշտը, որն էլ արտահայտվում է բացառապես անհողմ, խաղաղ եղանակներով:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում կոմունալ-կենցաղային օբյեկտների, ջեռուցման գազային անհատական սարքերը և ավտոտրանսպորտը: Համայնքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը ներկայումս նորմատիվային մակարդակից ցածր է:

9. 4 Հողային ռեսուրսներ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում տարածված են շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերը: Շագանակագույն հողերի հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50 սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70 սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավաավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24 գ/սմ³-ից մինչև 1.48 գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50 գ/սմ³-ից մինչև 2.65 գ/սմ³-ի, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձիկային է: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղերի տեսքով:

9. 5 Ջրային ռեսուրսներ: Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունեն հատկապես Սևաբերդի, Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները, ինչպես նաև Ակնա լիճը (3032 մ բարձրություն), որով ջրաբեխացվում են ամառային արոտավայրերը: Մարզը հարուստ է քաղցրահամ ջրերի աղբյուրներով (Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի): Մարզում առկա են 440 բնաղբյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր:

Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքներում կան տասնյակ լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Կոտայքի մարզի լճերը տնտեսական նշանակություն գրեթե չունեն: Դրանք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով և ունեն տեղական նշանակություն: Մարզի ջրամբարներն օգտագործվում են ոռոգման, էներգետիկայի, ձկնաբուծական և բուժական նպատակներով: Հայտնի են Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները:

Նախատեսվող գործունեության և դրա հարակից տարածքներում գետեր և խորքային ջրեր չկան: Համայնքի սահմաններում հոսում է Ջրվեժ գետը, որն աղտոտվում է կենցաղային կեղտաջրերով: Համայնքը կոյուղացված չէ և կենցաղային կեղտաջրերը հիմնականում թափվում են աղբահորեր, ինչը ստեղծում է անբարենպաստ սանիտարահիգիենիկ պայմաններ և վտանգ

է ներկայացնում ստորգետնյա ջրերի համար: Գլխավոր նախագծով նախատեսվում է համայնքի կոյուղացում և ցանցի միացում համայնքի մոտակայքով անցնող կոլեկտորին, ինչը կկանխի գետի աղտոտումը:

9. 6 Համայնքի և անտառապարկի կենսաբազմազանությունը

Բուսական աշխարհ. «Ջրվեժ» անտառապարկի տարածքը գտնվում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների շփման գոտում և ունի կտրտված ռելիեֆ: Այս երկու գործոններն իրենց ազդեցությունն են ունեցել բնական ֆլորայի ձևավորման գործում: Անտառապարկի բնական ֆլորան ընդգրկում է Երևանի ֆլորայի (Արարատյան գոգավորության) ավելի քան 28%-ը կամ Հայաստանի ֆլորայի շուրջ 13%-ը (412 տեսակ, որոնք ընդգրկված են 247 ցեղի 57 ընտանիքի մեջ [3]: Անտառապարկում հաջողությամբ զուգորդված են բնական և արհեստական (զբաղեցնում են անտառապարկի շուրջ 60%-ը) անտառտնկարկերը և լանդշաֆտները, առանձին հմայք են հաղորդում ջրավազանները: Ներկայումս ստեղծված է ուրույն էկոհամակարգ՝ իրեն բնորոշ բուսական և կենդանական աշխարհով: Անտառապարկը հարուստ է օգտակար բուսատեսակներով (ուտելի, գեղազարդ, ժողովրդական, բժշկության մեջ լայնորեն օգտագործվող դեղաբույսերով և այլն):

Տարածաշրջանն էկոլոգիապես անբարենպաստ է ծառաթփային բուսատեսակների կենսագործունեության համար: Մահմանափակող հիմնական գործոնը օդի չորությունն ու շոգն է: Այդ շրջանում բնական բուսական համակեցություններում տեղի է ունենում աճի ու զարգացման ճնշվածություն՝ դադար: Ամբողջությամբ ավարտվում է աֆեմերային խմբավորումների բույսերի վեգետացիան: Այն վերսկսվում է աշնան սկզբին՝ անձրևներից անմիջապես հետո: Անտառապարկի և նրա հարող տարածքների ֆլորան շատ հարուստ է սննդի, դեղագործական և այլ նպատակներով օգտագործվող բուսատեսակներով: Անտառապարկի ներմուծված ծառաթփատեսակների ֆլորայի բացահայտման համար կիրառվել են ստացիոնար հետազոտություններ [1, 4-6]: Բուսատեսակների հաշվառման համար կազմվել են հերբարիումներ, որոնք պահպանվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալի» ՊՈԱԿ-ում: Անտառապարկում կարելի է հանդիպել մերկասերմերի և ծածկասերմերի բաժիններին պատկանող 128 ներմուծված

ծառաթփատեսակներ ու պարտեզային ձևեր, որոնք ընդգրկված են 69 ցեղում և 32 ընտանիքում: Մերկասերմերի բաժնում ընդգրկված են 2 ընտանիքի, 8 ցեղի պատկանող 19 տեսակներ պարտիզային ձևեր, որոնցից մշտադալար, ասեղնատերև ծառեր՝ 17, տերևաթափ՝ 1, ասեղնատերև ծառ՝ 1, ասեղնատերև մշտադալար թուփ: Ծածկասերմերի բաժնում ընդգրկված են 30 ընտանիքի, 61 ցեղի, 109 տեսակներ և պարտիզային ձևեր, որոնցից տերևաթափ ծառեր՝ 61, տերևաթափ թփեր՝ 43, 2- ը՝ մշտադալար թփեր, 2-ը՝ տերևաթափ լիան, 1-ը՝ կիսաթուփ:

Անտառպարկի տարածքում աճող ներմուծված և չներմուծված բուսատեսակներից են՝ Մատուտակ մերկ (Glycyrrhiza echinata), Վիկ Կապադոկյան (Vicia cappadocica), Քրքում հրաշալի (Crocus speciosus), Թրաշուշան մուգ մանուշակագույն (Gladiolus atrovioleaceus Boiss), Հիրիկ ցանցավոր (Iris reticulata M.Bieb), Խլոպուզ եռավարսանդ (Merendera trigyna), Թեզիում Շովիցի (Thesium szovitsii), Գիհի բազմապտուղ (Juniperus polycarpus) և այլն: «Ջրվեժ» անտառպարկի ծաղկավոր բույսերի ֆլորան կազմված է 57 ընտանիքից և 247 ցեղին պատկանող 412 տեսակներից (առանց ներմուծված ծառաթփատեսակների): Բույսերի 195 տեսակ (47.3%) բազմամյա պոլիկարպ խոտաբույսեր են, 169 (41%) մոնոկարպ՝ այդ թվում 142 միամյաներ:

«Ջրվեժ» անտառպարկի ներմուծված ծառաթփատեսակներն ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն) Gymnospermae – Մերկասերմեր, Cupressaceae - Cupressaceae - Նոճազգիներ .

Աղյուսակ 4. «Ջրվեժ» անտառապարկի ներմուծված ծառաթփատեսակները

N	Տեսակներն՝ ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն)	Կենսաձևը
Gymnospermae - Մերկասերմեր		
Cupressaceae - Նոճազգիներ		
1	Biota orientalis (L.) Endl.- Կենսածառ արևելյան	Ծամ
2	B. orientalis f. globosa Endl.- Կ.արևելյան պ.ձ. գնդաձև	Ծամ
3	B. orientalis f. pyramidalis Endl. - Կ.արևելյան պ.ձ. բրգաձև	Ծամ
4	Chamaecyparis lawsoniana (A. Murr.) Parl.- Գետնանոճի լավսնի	Ծամ
5	Juniperus communis L.- Գիհի սովորական	Ծամ
6	J. oblonga Bieb.- Գ.երկարատերև	Ծ(թ)ամ
7	J. polycarpus C.Koch - Գ.բազմապտուղ	Ծամ

8	<i>J. sabina</i> L.- Գ.կազակական	Թամ
9	<i>J. virginiana</i> L.- Գ.վիրգինյան	Ծամ
10	<i>Thuja occidentalis</i> L.- Թույա արևմտյան	Ծամ
11	<i>T. occidentalis</i> f. <i>fastigiata</i> Jaeg.- Թ. արևմտյան պ.ձ. սյունաձև	Ծամ
12	<i>T. occidentalis</i> f. <i>globosa</i> Gard.- Թ. արևմտյան պ.ձ. գնդաձև	Ծամ
Pinaceae - Սոճինազգիներ		
13	<i>Abies nordmanniana</i> (Stev.) Spach.- Երևին կոկկասյան	Ծամ
14	<i>Larix sibirica</i> Ledeb.- Խեժափիճի սիրիրական	Ծատ
15	<i>Picea abies</i> (L) Karst.- Եղնի սովորական	Ծամ
16	<i>P. pungens</i> Engelm.- Ե. կեռիկավոր կամ փշոտ	Ծամ
17	<i>Pinus pallasiana</i> D.Don.Lamb.- Սոճի դրիմյան	Ծամ
18	<i>P. sylvestris</i> L.- Ս. սովորական	Ծամ
Angiospermae - Ծածկասերմեր		
Aceraceae - Թխկազգիներ		
19	<i>Acer campestre</i> L.- Թխկի դաշտային	Ծտ
20	<i>A. negundo</i> L.- Թ. հացենատերև	Ծտ
21	<i>A. platanoides</i> L.- Թ. սուխատերև կամ սրատերև	Ծտ
22	<i>A. pseudoplatanus</i> L.- Թ. կեղծսուխատերև, սպիտակ	Ծտ
Anacardiaceae - Աղտորազգիներ		
23	<i>Cotinus coggygia</i> Scop.- Դրախտածառ սովորական	Ծտ
24	<i>Pistacia mutica</i> Fisch.et Mey.- Պիստակենի բթատերև	Ծտ
Berberidaceae- Ծորենազգիներ		
25	<i>Berberis orientalis</i> Schneid.- Ծորենի (Կծոխուր) արևելյան	Թտ
26	<i>B. thunbergii</i> DC.- Ծ.Թունբերգի	Թտ
27	<i>B. vulgaris</i> L.- Ծ. սովորական	Թտ
28	<i>B. sp.</i>	Թտ
29	<i>Mahonia aquifolium</i> (Pursh) Nutt - Մահոնիա սովորական կամ սղովիատերև	Թմ
Betulaceae - Կեչազգիներ		
30	<i>Betula pendula</i> Roth- Կեչի ելունդավոր	Ծտ
31	<i>B. pubescens</i> Ehrh.- Կ.թավոտ	Ծտ
Buxaceae- Տոսախազգիներ		
32	<i>Buxus sempervirens</i> L.- Տոսախ մշտադալար	Թմ
Caprifoliaceae- Ցախակեռասազգիներ		
33	<i>Lonicera bracteolaris</i> Boiss. et Buhse - Ցախակեռաս ծաղկակիցավոր	Թտ
34	<i>L. caucasica</i> Pall. - Ց.Կովկասյան	Թտ
35	<i>L. iberica</i> Bieb.- Ց. իբերիական (վրացական)	Թտ
36	<i>Sambucus nigra</i> L.-Կտակենի սև	Թտ

37	<i>Symphoricarpos albus</i> (L.) S.F.Blake - Չյունապտղիկ սպիտակ	Թւ
38	<i>Viburnum lantana</i> L.- Գերիմաստի	Թւ
39	<i>V. opulus</i> L.- Բոնչի սովորական	Թւ
Celastraceae - Իլենազգիներ		
40	<i>Euonymus europaea</i> L.- Իլենի սովորական կամ Եվրոպական	Թւ
Celtidaceae - Փռնազգիներ		
41	<i>Celtis caucasica</i> Willd.- Փռնի կովկասյան	Ծտ
Cornaceae - Հոնազգիներ		
42	<i>Cornus mas</i> L.- Հոնի	Ծ(թ)տ
43	<i>Swida australis</i> (C.A.May) Takht.- Ճապկի հարավային	Ծ(թ)տ
Corylaceae - Տիլազգիներ		
44	<i>Carpinus betulus</i> L.- Բոխի կովկասյան կամ սովորական	Ծտ
45	<i>Corylus avellana</i> L.- Տիլենի սովորական	Թւ
Elaeagnaceae - Փշատազգիներ		
46	<i>Elaeagnus angustifolia</i> f. <i>culta</i> Sosn.- Փշատենի նեղատերև պ.ձ. մշակովի	Ծտ
47	<i>E. orientalis</i> L.- Փ.արևելյան	Ծտ
48	<i>Hippophae rhamnoides</i> L.- Զիչխան դժնիկանման	Թւ
Fabaceae - Բակլազգիներ		
49	<i>Caragana arborescens</i> Bam.- Կարագանա ծառանման	Թւ
50	<i>Halimodendron halodendron</i> (Pall.) Voss.- Ոլոռնածառ արծաթափայլ	Թւ
51	<i>Robinia pseudoacacia</i> L.- Ռոբինիա կեղծաակացիա	Ծտ
Fagaceae - Հաճարազգիներ		
52	<i>Fagus orientalis</i> Lipsky.- Հաճարենի արևելյան	Ծտ
53	<i>Quercus castaneifolia</i> C. A. Mey.- Կաղնի շագանակատերև	Ծտ
54	<i>Q. iberica</i> Stev.- Կ.վրացական	Ծտ
55	<i>Q. macranthera</i> Fisch. et C.A.Mey.ex Hohen.- Կ.արևելյան կամ խոշորատեղ	Ծտ
Grossulariaceae - Կոկոռազգիներ		
56	<i>Ribes aureum</i> Pursh. - Հաղարջենի ոսկեգույն	Թւ
57	<i>R. nigrum</i> L.- Հ.սև	Թւ
Hippocastanaceae - Զիակասկազգիներ		
58	<i>Aesculus hippocastanum</i> L.- Զիակասկ սովորական	Ծտ
Hydrangeaceae - Դրախտավարդազգիներ		
59	<i>Philadelphus caucasicus</i> Koehne - Սրնգենի կովկասյան (կեղծ հասմիկ)	Թւ

Juglandaceae - Ընկուզազգիներ		
60	Juglans regia L.- Ընկուզենի հունական	Ծտ
Loganiaceae - Լոզազգիներ		
61	Buddleia davidii Franch.- Բուդդելեյա Դավիդի	Թտ
Malvaceae - Տուդազգիներ		
62	Hibiscus syriacus L.- Հիբիսկոս (Բադրջուկ) սիրիական	Թտ
Moraceae - Թթազգիներ		
63	Morus alba L.- Թթենի սպիտակ	Ծտ
64	M. alba L. f. pendula - Թթենի սպիտակ պ.ձ. լացող	Ծտ
Oleaceae - Ձիթենազգիներ		
65	Forsythia intermedia Zab.- Ֆորսիցիա (Ոսկեզանգ) միջանկյալ	Թտ
66	Fraxinus excelsior L.- Հացենի սովորական	Ծտ
«ԶԲՎԵԺ» ԱՆՏԱՌՊԱՐԿԻ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԾԱՌԱԹՓԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԱԿԱՆԿԱԶՄԸ		
67	F. lanceolata Borkh.- Հ.նշտարաձև	Ծտ
68	Syringa vulgaris L.- Եղրևանի սովորական	Թտ
69	S. josikaea Jacq.fil.- Ե. հունգարական	Թտ
Platanaceae - Սոսազգիներ		
70	Platanus orientalis L.- Սոսի արևելյան	Ծտ
Rhamnaceae - Դժնիկազգիներ		
71	Frangula alnus Mill.- Բեկտենի լաստենատերև	Ծտ
Rosaceae - Վարդազգիներ		
72	Amelanchier ovalis Medik.- Ամելանիսիեր կլորատերև	Թտ
73	Amygdalus communis L.- Նշենի սովորական	Ծտ
74	A. fenzliana (Fritsch) Lipsky.- Ն.Ֆենցլի	Ծտ
75	A. nairica Fed. Et Thakht.- Ն.նաիրյան	Ծ(թ) տ
76	Armeniaca vulgaris Lam.- Ծիրանենի սովորական	Ծտ
77	Cerasus avium (L.) Moench - Կեռասենի թռչնի	Ծտ
78	C. incana (Pall.) Spach - Բալենի ալեհեր	Թտ
79	C. mahaleb (L.) Mill - Բ.մահալեբյան	Թտ
80	Chaenomeles japonica (Thunb.) Lindl. ex Spach. - Խենոմելես ճապոնական	Թտ
81	Cotoneaster armena Pojark - Չմենի հայկական	Թտ
82	C. integerrima Medik.- Չ. ամբողջաեզր	Թտ
83	C. melanocarpa - Չ. սևապտուղ	Թտ
84	C. multiflora Bunge - Չ.բազմաձաղիկ	Թտ
85	Crataegus atosanguinea Pojark.- Սզնի մուգ-արնագույն	Ծտ

86	<i>C. caucasica</i> C.Koch.- Ս.կովկասյան	Ծտ
87	<i>C. orientalis</i> Pall. ex M.Bieb.- Ս.արևելյան	Թտ
88	<i>Cydonia oblonga</i> Mill.- Սերկևիլենի սովորական	Ծտ
89	<i>Malus domestica</i> Borkh.- Խնձորենի կուլտուրական (մշակովի)	Ծտ
90	<i>M. sylvestris</i> Mill.- Խ. վայրի անտառային	Ծտ
91	<i>Mespilus germanica</i> L.- Ջկեռենի սովորական	Ծտ
92	<i>Padus mahaleb</i> (L.) Borkh.- Թխենի մահալեբյան (բալենի)	Թտ
93	<i>P.racemosa</i> (Lam) Gilib - Թ. սովորական	Թտ
94	<i>Persica vulgaris</i> Mill.- Դեղձենի սովորական	Ծտ
95	<i>Prunus divaricata</i> Leb.- Սալորենի չոված, շլորենի	Ծտ
96	<i>P. domestica</i> L. - Ս.կուլտուրական	Ծտ
97	<i>Prunus spinosa</i> L. - Մամիենի	Թտ
98	<i>Pyrus caucasica</i> Fed.- Տանձենի կովկասյան	Ծտ
99	<i>P. communis</i> L.- Տ.սովորական	Ծտ
100	<i>P. salicifolia</i> Pall.- Տ. ուռատերև	Ծտ
101	<i>Rosa canina</i> L.- Մասրենի շան	Թտ
102	<i>Rubus anatolicus</i> Focke - Մոշենի անատոլիական	Կթ
103	<i>Sorbus armeniaca</i> Hedl.- Արոսենի հայկական	Ծտ
104	<i>S. aucuparia</i> L.- Ա.սովորական	Ծտ
105	<i>Spiraea japonica</i> L.f.- Սսպիրակ ճապոնական	Թտ
106	<i>S. salicifolia</i> - Ա. ուռատերև	Թտ
107	<i>S. vanhouttei</i> (Briot) Zabal.- Ա.Վանհուտի	Թտ
Salixaceae - Ուռազգիներ		
108	<i>Populus bolleana</i> Lauche - Բարդի բոլեի	Ծտ
109	<i>P. deltoides</i> Marsh.- Բ.կանադական	Ծտ
110	<i>P. gracilis</i> Grossh.- Բ.նրբագեղ	Ծտ
111	<i>P. laurifolia</i> Ledeb.- Բ.դափնետերև	Ծտ
112	<i>P. nigra</i> L.- Բ. սև	Ծտ
113	<i>P. pyramidalis</i> Rosier (Roz.) Celak - Բ. բրգաձև	Ծտ
114	<i>P. simonii</i> Carr.- Բ.Սիմոնի	Ծտ
115	<i>P. tremula</i> L.- Կաղամախի	Ծտ
116	<i>Salix babylonica</i> L.- Ուռենի բաբելոնյան	Ծտ
117	<i>S. caprea</i> L.- Այծուռենի	Ծտ
118	<i>S. excelsa</i> S.G.Gmel.- Ու. բարձր	Ծտ
119	<i>S. purpurea</i> L.- Ու. դեղնաճյուղ. ծիրանագույն	Թտ
Sapindaceae - Օճառազգիներ		
120	<i>Koelreuteria paniculata</i> Laxm.- Կելրեյտերիա հուրանավոր	Թտ
Tamaricaceae - Կարմրանազգիներ		

121	Tamarix ramosissima Ledeb.- Կարմրան բազմաճյուղ	Թտ
Tiliaceae - Լորենազգիներ		
122	Tilia caucasica Rupr.- Լորենի կովկասյան	Ծտ
Ulmaceae - Թեղազգիներ		
123	Ulmus densa Litv.- Թեղի գնդաձև	Ծտ
124	U. foliaceae Gilib.- Թ. տերևաշատ	Ծտ
125	U. laevis Pall.- Թ. հարթ (ողորկ)	Ծտ
Vitaceae - Խաղողազգիներ		
126	Vitis sylvestris C.C. Gmel.- Խաղող անտառային	Լտ
127	V. vinifera L.- Խ.սովորական	Լտ

Ծառափերից երեքն ընդգրկված են Հայաստանի կարմիր գրքում՝ գիհի կազակական - Juniperus sabina, սոսի արևելյան - Platanus orientalis, նշենի նաիրյան -Amygdalus nairica [2]:

Աղյուսակ 5.

**Հանայնքի և «Ջրվեժ» անտառապարկի տարածքում աճող ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված
հազվագյուտ, անհետացող բուսատեսակները**

№	Բուսատեսակներ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ³
	Հայերեն	Լատիներեն	
1	Կանգար վարդագույն	Gundelia rosea M.Hossain & R.A.Al-Taey.	EN
2	Բուխինգերա անուրթային	Asperuginoides axillaris (Boiss. et Hohen.) Rauschert (=Buchingera axillaris Boiss. et Hohen.)	EN
3	Նվարդակ քնարաձև	Lepidium lyratum L.	EN

4	Գազ բծավոր	<i>Astragalus guttatus</i> Banks et Sol. (=A. <i>striatellus</i> Pall. ex M. Bieb.)	EN
5	Կորնզան հայաստանի	<i>Onobrychis hajastana</i> Grossh.	CR



Կանգար վարդագույն *Gundelia rosea* M.Hossain & R.A.Al-Taey, *Gundelia tournefortii* 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ



Բուխինգերա անութային *Asperuginoides axillaris* Boiss. et Hohen.) Rauschert (=Buchingera axillaris Boiss. Et Hohen.) կրիտիկական վիճակում գտնվող տեսակ



Կորնզան հայաստանի *Onobrychis hajastana* Grossh., վտանգված տեսակ
Գազ բծավոր *Astragalus guttatus* Sol. (=A. *striatellus* Pall. ex M. Biel., վտանգված տեսակ



Կենդանական աշխարհ. նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում կարող են հանդիպել Հայաստանի նմանատիպ գոտիներին բնորոշ անողնաշարավորներ: Հանդիպում են բզեզների (*Carabidae*), ոսկերբեզների (*Buprestidae*), սողունների տարբեր տեսակներ՝ օձեր (Գուրգա, Սովորական մողեսօձ, Կասպիական սահնօձ, Լորտու և այլն), մողեսներ, երկենցաղներ, կրծողներից տարածված են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), ձյան դաշտամուկը (*Microtus nivalis*), դաշտային մուկը (*Apodemus microps*), պարսկական

ավազամուկը (*Meriones persicus*) և այլն: Տարածքում հանդիպում են նաև հիմնականում ճնճղուկազգի թռչուններ, ինչպես նաև այլ ընտանիքների թռչնատեսակներ՝ Լոր (*Coturnix coturnix*), Հայկական քարակաքավ (*Alectoris chukar armenica*), Սովորական տատրակ (*Streptopelia turtur*) և այլն:

Անտառպարկի անտառածածկ տարածքում առկա են հիմնականում ծառաթփային բուսականության հետ կապված, տարածքի համար օտարածին տեսակներ, որոնք չունեն բնապահպանական նշանակություն: Սակայն այս գոտու համար բնորոշ մնացորդային էկոհամակարգերում տարածված են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 11 տեսակի բզեզներ, այդ թվում՝ երևանյան (*Olophrum erivanicum* Khnz.), արագաշարժ (*Callicerus velox* Khnz.) և ստորգետնյա (*Pronomaea subterranea* Khnz.) ստաֆիլիններ, կովկասյան (*Lydus caucasicus* Mar.) և երևանյան (*Apalus erivanensis* Khnz.) թարախահաններ, ուղղամարմին ծաղկեփռնեկերը (*Isomira stricta* Khnz.), արարատյան զատիկը (*Scymnus araraticus* Khnz.), արաքսյան տերևակերը (*Cryptocephalus araxicola* Khnz.), արարատյան (*Psylliodes araratica* Khnz.) և բծավոր (*Phyllotreta maculosa* Khnz.) լվիկներ, Խնձորյանի ընդակերը (*Bruchidius khnzoriani* Karap.), ինչպես նաև օխիմուս կապտաթիթեռը (*Thersamonina ochimus ochimus* H.-Shff.):

Անտառպարկի տարածքում հայտնաբերված են Բերնի Կոնվենցիայի Հավելված II (Հատուկ պահպանվող կենդանատեսակներ [Strictly protected fauna species]) մեջ մտնող Ալեքսանոր առագաստաթիթեռը (*Papilio alexanor*), Պրոզերպինա (*Proserpinus prosperpina* Pall.) իլիկաթիթեռ:

Նկար 13.



Պրոզերպինա իլիկաթիթեռ

Ստորև ներկայացվում է անտառպարկի և հարակից տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները:

Աղյուսակ 6.

**Ջրվեժ համայնքի և «Ջրվեժ» անտառպարկի տարածքում հանդիպող ընդգրկված հազվագյուտ,
անհետացող կենդանատեսակներ**

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած
	Հայերեն	Լատիներեն	Կատեգորի ան՝
1	Տոնական գնայուկը/բզեզներ/	Poecilus festivus	VU
2	Նեղ սևամարմին/բզեզներ/	Laena constricta Khnzorian	EN
3	Արաքսյան տերևակեր	Cryptocephalus araxicola Khnzorian	EN
4	Օրդուբադյան սևամարմին/բզեզներ/	Adelphinus ordubadensis Reitter	EN
5	Հայկական սևամարմին/բզեզներ/	Armenohelops armeniacus Nabozhenko	EN
6	Ալեքսանդր առագաստաթիթեռ/թիթեռներ/	Papilio alexanor orientalis Romanoff	VU
7	Ավրորինա դեղնաթիթեռ/թիթեռներ/	Colias aurorina Herrich-Schaffer	VU
8	Ռոմանովի թումարես/թիթեռներ/	Tomares romanovi	VU
9	Անդրկովկասյան Կապտաթիթեռ/թիթեռներ/	Plebejus transcausicus	EN

10	Սիրիական սխտրագորտ/երկկենցաղ/	Pelobates syriacus Boettger	VU
11	Առաջավորասիական մաբույա/մողես/	Trachylepis septemtaeniata Reuss	VU
12	Մեհելիի պայտաքիթ չղջիկ	Rhinolophus mehelyi Matschie	VU
13	Երկարատու սցինկ	Eumeces schneideri (Daudin, 1802)	VU

EN (*Endangered*) - վտանգված տեսակ

VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,

CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ:




Տոնականգլ
Poecilus fescuae
Նեղ սևամարմին
/բզեզներ/Laena constricta
KhnzorianEN B 1a վտանգված
տեսակ



Արաքսյան տերևակեր Papilio
alexanor orientalis Romanoff,
«խոցելի»



Օրդուբադյան Հայկական սևամարմին/բզեզներ/
սևամարմին/բզեArmenohelops armeniacus
ordubadensis ReiiNabozhenko վտանգված տեսակ
տեսակ



Ալեքսանոր
առագաստաթիթեռ/թիթեռներ/
Papilio alexanor orientalis
Romanoff «խոցելի»



Ավորի մարկուկասյան Կապտաթիթեղեղնաթիթեղներ/ *Plebejus transcaucasicus aurorina* (Rebel, 1901) վտանգված տեսակ Schaffel «Խոցելի»



Սիրիական սխտորագորտ/երկկենցաղ/ *Pelobates syriacus* Boettger, 1889, «խոցելի»

Առաջավորասիական մաբույա/մողես/ *Trachylepis septemtaeniata* Reuss «խոցելի»



Մեհելի պայտաքիթ չղջիկ *Rhinolophus mehelyi* Matschie, 1901 «խոցելի»

Երկարատու սցինկ, *Eumeces schneideri* (Daudin, 1802) «խոցելի»

Տարածքում կարող են հանդիպել նաև կարմիր գրքում գրանցված և գրեթե ամենուրեք տարածված Օձակեր արծիվ-*Circaetus gallicus* / VU), Փոքր ենթարծիվ- *Aquila pomarina*, C. L. Brehm/ VU), Բվեճ-*Bubo bubo* VU), Օձակեր արծիվ, *Circaetus gallicus*, Գորշ արջ-*Ursus arctos* Linnaeus/ VU):

9. 7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. Կոտայքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է մարզում զբոսաշրջությունը: Ջրվեժում կատարված պեղումների արդյունքում բացահայտվել են միջնադարյան ճարտարապետության երկու՝ Քոսաղբյուր վայրի գերեզմանատան համալիրները՝ VI-VII դդ. խաչաձև գմբեթավոր եկեղեցին, XII-XIII դդ. միանավ թաղածածկ եկեղեցին և երկու փոքր մատուռներ: Ջրվեժի տարածքում գտնվում են գմբեթավոր սրահի ավերակներ, մատուռներ, խաչքարեր, վիմագրական հուշարձաններ, հնագույն և միջնադարյան բնակավայրեր, կոթողներ, գերեզմաններ և այլն: Ուշագրավ են «Խաչատուրի հուշարձանը» իր փոքրիկ պուրակով: Հուշարձանները կարող են օգտագործվել զբոսաշրջության, ինչպես նաև գիտական, կրթական և ճանաչողական նպատակներով:

Կից ներկայացվում է Ջրվեժ համայնքի տարածքում հաշվառված և ՀՀ կառավարության որոշմամբ (2003թ. դեկտեմբերի 24-ի N1793-Ն) հաստատված պատմամշակութային հուշարձանների ցանկը: **Հավելված 4**

Համաձայն ՀՀ Կառավարության 14.08.2008թ. N967-Ն որոշմամբ ամրագրված բնության հուշարձանների ցանկի՝ Ջրվեժ համայնքում և գործունեության տարածքում բնության հուշարձաններ չկան: Նախատեսվող գործունեության տարածքից 1,8 կմ դեպի արևելք Ողջաբերդ համայնքին կից գտնվում է «Ողջաբերդ» բնապահպանական համալիրը:

9. 8 Հատուկ պահպանվող տարածքներ. նախատեսվող գործունեության տարածքին կից այլ պետական արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր չկան: Միակ հատուկ պահպանվող տարածքը դա «Ջրվեժ» անտառպարկն է, որը պատկանում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին: Վերջինիս մեջ է մտնում տարածքից 2,5 կմ դեպի հարավ գտնվող «Էրեբունի» պետական արգելոցը:

1990-ական թվականների տնտեսական և էներգետիկ ճգնաժամը իր ազդեցությունն է թողել անտառպարկի վրա, որի պատճառով ներկայումս այն գտնվում է ոչ բարվոք վիճակում, կարիք ունի վերականգնման և վերակառուցման աշխատանքների:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախագծով նախատեսվում է միօրինակությունից տարբերվող յուրօրինակ լուծումներով զբոսաշրջության և հանգստի կենտրոնի ստեղծում, ինչի նախապայմանները ապահովելու համար կարևորվում են հետևյալ գործոնները:

- տարածքի հարմարավետ տեղակայություն,
- ենթակառուցվածքներ կայանատեղի, օժանդակ տարածքներ և այլն,
- հարթակ,
- երկրաչափական կանոնավոր տարածքներ,
- հարթակում բեմի առկայություն, որակյալ ձայնային և լուսային համակարգեր 60-70 կմ հեռավորություն, հարմարավետ մուտք,
- բուսականություն,
- ճաշկերպության կազմակերպման համար նախատեսված վայր կամ հարմարավետ ծածկով տաղավար, որպեսզի չլինի հավելյալ վրանների տեղադրման կարիք,
- սեփական մշտական խոհանոցի առկայություն,
- մեկ կազմակերպության համար ամբողջ տարածքի փական հնարավորություն,
- սարքավորված սանհանգույցներ, ռոռգման ջուր,
- հարթակի համար առավելություն է դիտվում ժամանցային գոտիների, խաղահրապարակների և այլ սարքավորումներ առկայությունը

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանաշրջանում տարածքում նախատեսվում է կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

- չափագրման և հողային (հարթեցման),
- տարածքում մոնտաժային աշխատանքների նախապատրաստում,
- տարածքի էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղագծի կազմակերպում,
- ընդհանուր հատակապատում,
- գմբեթաձև վրանի տեղադրում,
- սանհանգույցի նախապատրաստում և տեղադրում,
- խոհանոցի նախապատրաստում և տեղադրում,
- վարչական հատվածների նախապատրաստում և տեղադրում,
- ենթակառույցների տեխնիկական համալրում,

- տարածքի ուղղեցույցերի կազմակերպում,
- մեքենաների կայանատեղերի կազմակերպում,
- տարածքի ընդհանուր բարեկարգում:

11. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով և մոդուլներով, որոնք չեն վնասի շրջակա բնությանը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն այնպիսին, որպեսզի չխաթարվի տարածքի բացառիկ մոդելը և հարակից շրջակա միջավայրը:

11.1 Արտադրական հզորություններ և նախատեսվող գործողություններ. համաձայն նախագծային լուծումների կառուցապատման հատվածում նախատեսվում է 875,6մ² մակերեսով միջոցառման հարթակ՝ փայտյա տերրասա, մետաղյա թեթև հավաքովի կոնստրուկտիվ կառույցներ (վարչական կառույցներ, խաղահրապարակ, սան հանգույց, խոհանոց)՝ 238,0մ², հետիոտնային տարածքներ՝ (174,22մ²), 80 մեքենայի համար նախատեսված կայանատեղի՝ 1300մ², ընդամենը 2587.82մ²: Մնացած 1042,58մ² մակերեսով տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է:

Միջոցառման հարթակը, ռեստորանի հարթակը, այլ մետաղյա թեթև կոնստրուկցիաները բերվելու են պատրաստի վիճակում և տեղադրվելու են՝ առանց հողային աշխատանքների:

Սանհանգույցի, անդմինիստրատիվ կորպուսի և խոհանոցի տեղադրումը կատարվելու է մետաղական կարկասով և փայտե երեսպատմամբ մոդուլային կոնստրուկցիաներով, որոնք տեղադրվելու են մետաղական սյուների վրա, առանց բետոնապատման աշխատանքների:

Մոդուլային կառույցները ծածկվելու է թիթեղյա տանիքով, փայտե հավաքովի պատերով՝ ծովականաչ գույնի վիտրաժով:

Վարչական պահեստային, խոհանոցային կառույցները լինելու են մետաղական կոնստրուկցիաներից, փայտից, մետաղապլաստե ապակիներից, որոնք բերվելու են պատրաստի վիճակում:

Տարածքում նախատեսվում է 170,0մ² մակերեսով մանկական խաղահրապարակ, որտեղ տեղակայվելու են երեխաների ժամանցի համար ատրակցիոններ: Խաղահրապարակը պատվելու է մշակված խոտածածկույթով (գլանափաթեթներով)՝ պատրաստի հողային շերտով:

Տարածք մոտեցող ճանապարհը ասֆալտապատված է, իսկ ավտոկայանատեղին հարթեցված է և ծածկված է խճաքարով:


Հանգստյան գոտու տարածքում կատարվելու է ճանապարհների ընդհանուր հատակապատում (սալիկներ), իսկ հետիոտնային տարածքները լինելու են խճածածկ:

Հանգստի գոտու կազմակերպման լուծումներում կարևորվում է գեոդեզիական գմբեթների նախատեսումը: Այն իրենից ներկայացնում է ձողերի միջոցով հավաքված գնդաձև ճարտարապետական կառույց՝ գեոդեզիկ կառուցվածքով: Այսպիսի կառուցվածքի շնորհիվ գմբեթաձև կառույցն ունի բարձր կրողունակություն, բարձր ամրության աստիճան: Գմբեթն ունի նաև իդեալական աերոդինամիկ կառուցվածք, որի շնորհիվ այն կարելի է տեղադրել նաև այն գոտիներում, որտեղ դիտվում են քամիներ և փոթորիկներ: Գմբեթաձև վրանների գեոդեզիական գմբեթներով վրանները բավականին կիրառելի են աշխարհի տարբեր երկրներում:


Նկար 14.



Նկար 15.



Գեոդեզիական զմբեթների համար ընտրված են հետևյալ չափերը՝ տրամագիծ 20մ. մակերես 314 մ², բարձրությունը՝ 8մ, ծավալը՝ 1750մ³: Գեոդեզիական զմբեթները կարող են դիմանալ մինչև 240կգ վրկ/մ² ձյան ուժգնության և մինչև 30կգ վրկ/մ² թույլատրելի քամու արագությանը:



Գմբեթների տեղադրման ժամկետը նախատեսվում է 2 օր: Տեղադրման աշխատանքները կատարվելու են ամբարձիչի և կռունկի օգնությամբ, ներգրավելով 8 մարդ: Ամրությունն ապահովելու համար գմբեթները տեղադրվելու են ՇՆԿ 2.01.07-85 պահանջներին համապատասխան:

Գործունեության կատարման շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. ամբարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ: Վերջիններս վարձակալվելու են համապատասխան կազմակերպություններից, չեն կայանվելու նախատեսվող գործունեության տարածքում, այլ աշխատելու են ըստ պահանջի՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության իրականացումը տևելու է 4 ամիս:

Գործունեության իրականացման ժամանակացույց

№	Աշխատանքի անվանումը	Աշխատանքներ տևողությունը շաբաթներով												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Նախապատրաստական աշխատանքներ													
1.1	Ժամանակավոր բիզնես-պլանների և ջրային ռեզերվուարների տեղադրում													
1.2	Ժամանակավոր անցակետի կազմակերպում													
1.3	Տարածքի ժամանակավոր հոսանքամատակարարում													
2	Տարածքի մաքրմանն ու բարեկարգմանն ուղղված աշխատանքներ													
2.1	Տարածքի մաքրման աշխատանքներ, աղբահանություն													
2.2	Տնկման համար հողային զանգվածի պատրաստման աշխատանքներ													
2.3	Ծառերի տնկման և խոտածածկի ցանման աշխատանքներ													
2.4	Ընդհանուր տարածքի ջրամատակարարման և ոռոգման համակարգերի անցկացում													

3	Մոնիտաժային աշխատանքներ													
3.1	Մետաղական մոդուլային կոնստրուկցիաների տեղադրում													
3.2	Տարածքի էլեկտրամատակարարման մոնիտաժային աշխատանքներ													
3.3	Մեպտիկ հորի և կոյուղու ջրամատակարարման համակարգի տեղադրում													
3.4	Մոդուլային տարածքներ ներքին հարդարման աշխատանքներ													
3.5	Սալահատակի և եզրաքարերի տեղադրում													
3.6	Հիմնական հատակի մոնիտաժայն աշխատանքներ՝ կազմված մետաղական կոնստրուկցիաներից և փայտե տախտակներից													
3.7	Գմբեթի տեղադրում													
3.8	Հակահրդեհային անվտանգության ապահովման ուղղված աշխատանքներ													
3.9	Ընդհանուր հրապարակի նախապատրաստական աշխատանքներ՝ շահագործման նպատակով													

Տարածքի էլեկտրամատակարարումն (շինարարության և շահագործման փուլ) իրականացվելու է գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից՝ համաձայն էլեկտրամատակարարման պայմանագրի: Հավելված 3

Տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր:

Շինարարության և շահագործման փուլերում համալիրը գազամատակարարման համակարգ չի ունենալու: Շահագործման փուլում տարածքի ջեռուցումը, խոհանոցի գործունեությունն իրականացվելու է էլեկտրամատակարարման միջոցով՝ էլեկտրական սալիկներով:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում է նաև զբոսաշրջության հետագա զարգացման ռազմավարություն: Ռազմավարությունը մշակվել է հաշվի առնելով զբոսաշրջության հետևյալ ձևերի զարգացումը՝ համալիրի կենտրոնում կազմակերպվելու են քայլարշավ, հեծանվային տուր, ձիարշավ, յոգա: Ձիերը վարձակալվելու են Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներից, կնքելով պայմանագրեր բնակիչների հետ: Սա կխթանի նաև գործունեության տարածքին կից համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Ձիարշավը, քայլարշավը և հեծանվային տուրերը կազմակերպվելու են անտառպարկի տարածքում գոյություն ունեցող արահետներով՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի համաձայնությամբ:

Տարածքում հանգստացողների և զբոսաշրջիկների ճիշտ կողմնորոշվելու համար՝ տեղադրվելու են ուղղեցույց վահանակներ:

11. 2 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր. շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են ջուր՝ աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինարարության և շահագործման փուլերում խմելու ջուրը բերվելու է խմելու ջրի ցիստեռնով: Այդ նպատակով տարածքում տեղադրվելու է 10մ³ տարողության ջրի բաք, որտեղ լցվելու է ցիստեռնով բերվող ջուրը: Ջրի մատակարարումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, հաճախականությունն՝ ըստ կարիքի:

Տարածքի հրդեհաշիջման նպատակների և ռոռգման աշխատանքների համար՝ նախատեսվում է 25մ³ տարողության պլաստիկ ջրի բաքի տեղադրում: Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - բանվորների թիվն է,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր

T -աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ՝ 4 ամիս՝ 88 օր:

Այսպիսով.

$$W = (5 \times 0.016 + 15 \times 0.025) \times 88 = 40.04 \text{մ}^3 / \text{շին.ժամ, միջին օրական } 0.455 \text{մ}^3:$$

Հանգստացողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$V_y = n \times 4$$

Որտեղ՝ n - հանգստացողների թիվն է, միջինացված՝ 365 հանգստացող, իսկ առավելագույնը 500 հանգստացող.

Այսպիսով.

$$V_y = 365 \times 4 = 1.460 \text{լ} = 1,46 \text{մ}^3 / \text{օր/միջինը}$$

$$V_y = 500 \times 4 = 2.000 \text{լ} = 2 \text{մ}^3 / \text{օր/առավելագույն ծանրաբնվածության դեպքում}$$

$$W = k \times n \times T,$$

Որտեղ՝ k – ժամում մեկ զուգարանի ջրի ծախսն է՝ 83լ/ժ

n –զուգարանների թվաքանակն է

T – աշխատանքային ժամերը

Այսպիսով.

$$W = 83 \times 12 \times 10 = 9.960 \text{լ/օր} = 9,96 \text{մ}^3 / \text{օր}:$$

Շահագործման փուլում աշխատողների (35 սպասարկող և 10 վարչական) խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

$$W = (10 \times 0.016 + 35 \times 0.025) \times 365 = 377,775 \text{մ}^3/\text{տարի, միջին օրական՝ } 1,035 \text{մ}^3:$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումը կկազմի 12,455մ³ (միջին թվով հանգստացողների համար և 12,995 մ³) առավելագույն թվով հանգստացողների համար:

11.3 Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում առաջանալու են կենցաղային կոյուղաջրեր, որոնք ինքնահոս համակարգով հեռացվելու են դեպի 90*90 չափերի 1 շարժական բիոգուլարան: Բիոգուլարանը տեղադրվելու է վարձակալության սկզբունքով, որը աշխատանքների ավարտից հետո հանվելու է: Վերջինիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Շահագործման փուլում տարբեր տաղավարներում տեղադրվելու են գուլարաններ(12հատ): Նախատեսվում է տարածքում տեղադրել 2,1մ երկարությամբ, 2,1մ լայնությամբ և 2,1մ բարձրությամբ FBR-6 մոդելի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման 2 կայան, որոնք ապահովելու են օրական 12մ³ (յուրաքանչյուր մաքրման կայանի հզորությունը կազմում է օրական 6մ³) ծավալով կենցաղային կեղտաջրերի՝ աերոբ, նստեցման փուլերով մաքրում:

Կենսաբանական մաքրման կայանի մուտքում կեղտաջրերն ունենալու են ԹԿՊ5՝ 280 (մգ/լ), ԹՔՊ՝ 520(մգ/լ), Կախված մասնիկներ՝ 300 (մգ/լ) բաղադրությունը:

Կեղտաջրերի մաքրումից հետո կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշները կլինեն՝ ԹԿՊ5՝ 18(մգ/լ), ԹՔՊ՝ 70(մգ/լ), Կախված մասնիկներ՝ 25 (մգ/լ) նորմերին համապատասխան: Այսպիսով կենսաբանական մաքրման կայանը կեղտաջրերը կմաքրի մինչև թույլատրելի նորմերը: Մաքրված կեղտաջրերը ջրահեռացման ներքին՝ վերգետնյա ցանցով (պլաստիկե խողովակ) միանալու է անտառպարկի ոռոգման ցանցին:

Շինարարության ընթացքում կեղտաջրերի արտահոսքը կկազմի.

$$W_{\text{կենց. կոյ.}} = W_{\text{կ.}} \times (1 - \epsilon)$$

Որտեղ,

Կ - կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

$W_{կենց.կոյ.} = 40,04 \times (1-0,05) = 38.038 \text{ մ}^3$ կոյուղային արտահոսք շինարարության փուլում:

Շահագործման փուլում կեղտաջրերի արտահոսքը՝ նույն հաշվարկի սկզբունքով կկազմի.

$W_{կենց.կոյ.} = 12,995 \times (1-0,05) = 12,34525 \text{ մ}^3$ կոյուղային արտահոսք օրվա հաշվով խիստ ծանրաբեռնվածության պայմաններում:

11.4 Հողային ռեսուրսներ. Տարածքում արդեն կատարվել են հողաշինական աշխատանքներ: Հանված հողն արդեն մասնակիորեն օգտագործվել է տարածքի հարթեցման և բարեկարգման համար: Իսկ մոտ 4200 մ^3 ծավալի հողային զանգվածը կուտակված է տարածքում, ծածկված է համապատասխան անջրթափանց թաղանթով: Գործունեության իրականացման ընթացքում հողային աշխատանքներ նախատեսվում է կատարել միայն մաքրման կայանների տեղադրման համար: Երկու մաքրման կայանի համար փորվելու է մեկ՝ $3 \times 6 \times 2$ չափերի հոր: Փորման աշխատանքների արդյունքում կառաջանա $41,4 \text{ մ}^3$ ($3 \times 6 \times 2$) + 15% = 41,4) հող, որը չի պարունակում հողաբուսաշերտ: Հողային զանգվածը կուտակվելու է տեղում և մաքրման կայանների տեղադրելուց հետո մի մասն օգտագործվելու է ամրացման համար, իսկ մնացած մասը օգտագործվելու է տարածքի հարթեցման և կանաչապատման համար:

11.5 Բուսական և կենդանական աշխարհ. Գործունեության ենթակա տարածքում արդեն կատարվել է հողային աշխատանքներ, որով էլ պայմանավորված է բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների առկայությունը: Տարածքը մասնակի ծառապատ է՝ 136 ծառեր: Ընկերության կողմից տարածքում արդեն իսկ կատարվել են ծառատնկումներ՝ 355 հատ ծառ (թույա՝ 97, բարդի կանադական՝ 125, սոճի դրիմյան՝ 20, սոճի սովորական՝ 43, թղկի՝ 60, եղևնի սովորական՝ 5 և եղևնի արծաթափայլ՝ 5 հատ): Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, շարունակվելու են ծառատնկման աշխատանքները:

11.6 Թափոնների առաջացում. նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ բոլոր լուծումները լինելու են թեթև շարժական հավաքովի կոնստրուկցիաներից, որոնք բերվելու և տեղադրվելու են պատրաստի վիճակում, ինչը բացառում է շինարարական թափոնների առաջացումը: Հատակների համար նախատեսվում է տաղավարների հատակների փայտյա երեսապատում, որի արդյունքում կառաջանա մոտ 3մ³ ծավալով փայտի թափոններ: Այն պահվելու է տարածքում՝ պարկերի մեջ և նախատեսվում է օգտագործել սեփական կարիքների համար:

Շինարարության և շահագործման փուլերում առաջանալու է կենցաղային թափոն՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) համապատասխանաբար՝ օրական 9կգ և 273.4կգ: Շինարարության փուլում աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ, որն ամենօր հեռացվելու է տարածքից: Շահագործման փուլում առաջացող կոնցաղային աղբը կուտակվելու է համապատասխան աղբի տարրաների (1.1մ³ տարողությամբ 4 աղբաման) մեջ և պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը նախօրոք կհամաձայնեցվի համայնքապետարանի հետ:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

$m - 1$ հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

$n -$ աշխատողների թիվն է,

հետևաբար,

$$M=20*120=2400\text{կգ/տարի},$$

Սակայն շինարարությունը տևելու է 4 ամիս, հետևաբար,

$$M=2400/12*4=800\text{կգ շինարարության ժամանակ՝ օրական 9,09կգ:}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկզամի.

$$M=(500+45)*150=81.750\text{կգ/տարի կամ } 224\text{կգ/օր:}$$

11.7 Սոցիալական. շինարարության ժամանակ աշխատելու են 20 մարդ՝ մասնագետներ, որից 5 ԻՏԱ, 15 բանվոր: Աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր շարժական

տնակ՝ աշխատողների կենցաղ-սանիտարական պայմանները ապահովելու, ինչպես նաև հանգստի կազմակերպման համար:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում ներգրավելու են 45 մարդ՝ 35 սպասարկող անձնակազմ, 10՝ վարչական աշխատող:

Հանգստի գոտու առավելագույն տարողությունը ձմեռվա սեզոնին լինելու է մինչև 230 մարդ, ամառը՝ մինչև 500 մարդ:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 273.800.000 ՀՀ դրամ գումարի ներդրում:


11. 6 Բարեկարգում և կանաչապատում. նախատեսվող գործունեության շինարարական փուլի ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Տարածքը մաքրվելու է ավելորդ կենցաղային աղբից և վերականգնվելու է լանդշաֆտը: Հարակից տարածքի ամբողջ մակերեսով նախատեսվում է լանդշաֆտային ճարտարապետության մշակում՝ անգլիական զբոսայգիների ոճով:

Նկար 17.




Նախատեսվում է կատարել կանաչապատման աշխատանքներ՝ տարածքին բնորոշ 395 հատ ծառատեսակներով և թփատեսակներով՝ գլիցինա-15, կեչու ծառ-40, չինար-100, գլխի կազակական-80, վարդ մագլցող-35, վարդ թուփ- 40, բադեղ-85 հատ:

200,45մ² մակերեսի վրա տնկվելու են ծաղկող բազմամյա թփեր և մագլցող ծաղկող բույսեր: Կատարվելու է ընդհանուր (հարակից և ենթակա տարածք)՝ 1860մ² մակերեսով գազոնապատում՝ ցանովի եղանակով:



11.7 Ոռոգում. Կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով նախատեսվում է տեղադրել անկախ ոռոգման համակարգ: Ոռոգումը կատարվելու է տարածքում տեղադրված տեխնիկական ջրի բաքից՝ 25մ տրամագծի վերգետնյա պոլիմերային խողովակաշարերով: Գազոնապատ հատվածում ոռոգումը կատարվելու է ցնցուղային համակարգով:

Նկար 19.



Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W = (K \times 75) \times k + (M \times 25) \times m + (C \times 20) \times c$$

Որտեղ,

K, M, C – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի

k, m, c – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից

հետևաբար,

$$W = 4.705,548 + 1.820 + 1.785,6 = 8.311,148 \text{ մ}^3 \text{ ջուր տարվա կտրվածքով:}$$

Կանաչապատման աշխատանքների համար նախատեսվող բուսահողմն՝ անհրաժեշտության դեպքում, ընկերությունը ձեռք է բերելու ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին

համապատասխան, նախօրոք ձեռք բերելով օրենսդրությամբ սահմանված համաձայնությունները:

12. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Ջրվեժ» անտառպարկի տարածքում, որը Ջրվեժ համայնքից գտնվում է մոտ 460մ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու: «ԲԵՔՍԵՅՁ» ՍՊ ընկերության կողմից նախօրոք կատարվել են ծառատնկման որոշակի աշխատանքներ: Նախատեսվող գործունեության շրջանակներում նախատեսվում է, առանց վնասելու անտառպարկի բուսականությունը, վերջինիս տարածքում՝ կանաչապատման նախագծով սահմանված կարգով, իրականացնել լայնածավալ ծառատունկ, ավելացնելով բարձրորակ ծառատեսակների քանակը:

Հանգստի համալիրի կառուցումը կունենա սոցիալական և էկոլոգիական դրական ազդեցություն: Սոցիալական տեսանկյունից՝ կստեղծվեն ժամանակավոր և նոր աշխատատեղեր՝ 65: Բնապահպանական տեսանկյունից կիրականացվեն ծառատնկումներ, կանաչապատման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները կրելու են կարճաժամկետ բնույթ: Գործունեության իրականացման ընթացքում չեն կատարվելու հիմնական կառուցապատման, ինչպես նաև հողային և բետոնային աշխատանքներ: Տեղադրվող կառույցները լինելու են մետաղյա և փայտյա կոնստրուկցիաներով: Ուստի գործունեության իրականացման հետևանքով հնարավոր ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Նախատեսվող գործունեությունն՝ իր տարածական տեղակայման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների շնորհիվ կդառնա բավական գրավիչ, հարմարավետ և ժամանակակից հանգստի գոտի, բարձր պահանջներով տարբեր ձևաչափերի (կորպորատիվներ, մասնավոր, սպորտային) և բիզնես բացօթյա միջոցառումների

կազմակերպման և զբոսաշրջության կենտրոն: Այն խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացմանը համար:

Տարածքի զբոսաշրջության զարգացման շրջանակներում նախատեսվելու է նաև զբոսաշրջիկների համար քայլարշավներ, հեծանվային տուրեր և յոգայի կազմակերպում: Հեծանվային տուրերը, ձիարշավները և քայլարշավները նախատեսվում է կազմակերպել պարկի տարածքում գոյություն ունեցող արահետներով:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում յուղերի հնարավոր ներթափանցման, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքի բուսական և կենդանական տեսակների հայտնաբերվելու դեպքում, դրանց պահպանման հետ:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է առանց հողաշինարարական աշխատանքների: Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջը, շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից, ընկերությունը աշխատանքերը դադարեցվելու են և դրա մասին հայտնվելու է լիազոր մարմին:

Միջոցառումներում հաշվի են առնվել նաև հանրապետությունում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը, շինարարական հրապարակներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանն ուղղված պայմանների ապահովումը:

12.1 Օդային ավազան. գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխազագերի տեսքով:

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

12.2 Հողային ռեսուրսներ. մինչև գործունեության սկսվելը տարածքում հողային աշխատանքներն արդեն կատարվել են: Հողային աշխատանքներ կատարվելու են միայն մաքրման կայանների տեղադրման նպատակով: Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվելու է .

- հանված հողի գրունտը պահվելու է ծածկված վիճակում, մինչև վերջինիս բարեկարգման նպատակով օգտագործումը,

- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

12.3 Ջրային ռեսուրսներ. գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հանարավոր բացասական ազդեցություններ չեն նախատեսվում: Գործունեության ենթակա տարածքն ապահովված չէ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով: Շինարարության և շահագործման փուլերում աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքները հոգալու են բերովի ջրով՝ խմելու ջրի ցիստեռնի միջոցով: Ցիստեռնով մատակարարվող ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 10մ³ տարողության ջրի բաք: Ջրի մատակարարումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, ելնելով ջրի սպառման պահանջարկից:

Կեղտաջրերի հեռացման համար շինարարության փուլում նախատեսվում է.

- շարժական բիոզուգարանի տեղադրում՝ վարձակալության հիմունքներով, որը աշխատանքների ավարտից հետո հանվելու է,

- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Շահագործման փուլում նախատեսվում է .

- տարածքում 2,1մ երկարությամբ, 2,1մ լայնությամբ և 2,1մ բարձրությամբ FBR-6 մոդելի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայանի տեղադրում, որն ապահովելու է օրական 6մ³ ծավալով կենցաղային կեղտաջրերի՝ աերոբ, նստեցման փուլերով մաքրում,

-կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշների՝ ԹԿՊ5՝ 18(մգ/լ), ԹՔՊ՝ 70(մգ/լ), Կախված մասնիկներ՝ 25(մգ/լ) նորմերին համապատասխանություն,

-մաքրված կեղտաջրերը ջրահեռացման ներքին՝ վերգետնյա ցանցով (պլաստիկե խողովակ) միանալու է անտառպարկի ոռոգման ցանցին:

12. 4 Կենսաբազմազանություն. նախատեսվող գործունեության տարածքում արդեն կատարվել են հողաշինական աշխատանքներ, որով էլ պայմանավորված է բուսական և կենդանական աշխարհի բացակայությունը: Տարածքում արդեն կատարվել են որոշակի ծառատնկման աշխատանքներ: Իսկ գործունեության շինարարական փուլի ավարտից հետո նախատեսվում է գործունեության ենթակա և հարակից տարածքներում ծառատնկման աշխատանքներ՝ անտառպարկին բնորոշ ծառատեսակներով և ծառաթփատեսակներով:

Տարածում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաշտությունից ելնելով նախատեսվում է.

-ընկերության կողմից մշակվելու է գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,

- հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը տեղեկացնելու է «Զրվեժ» անտառպարկին, նախօրոք առանձնացնելով հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:

12.5 Թափոններ. գործունեության իրականացման շինարարության փուլում շինարարական թափոններ չեն առաջանալու, քանի որ բոլոր նախատեսվող շինությունները (մոդուլները) լինելու են մետաղյա կոնստրուկցիաներ, հարթակներ, որոնք բերվելու են պատրաստի վիճակում և տեղադրվելու են առանց հողաշինական աշխատանքների կատարման: Նախատեսվում է.

- առաջացած փայտե թափոնները պահվելու են տարածքում և օգտագործվելու են սեփական կարիքների համար,

- շինարարության փուլում կենցաղային աղբը հավաքվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Կապալառուի կողմից՝ ամենօր,

- շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը հավաքվելու է համապատասխան աղբահավաք տարողությունների մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է համայնքային աղբավայր՝ համապատասխան թույլտվությամբ:

12.6 Աղմուկ և թրթռում. շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- կատարվող աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:

12.7 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, ակնոց և այլն),

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու է 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N 87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ,

- աշխատողների համար հատկացվելու է ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:

Շահագործման փուլ.

- հանգստի համալիրն ապահովված է լինելու օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- տարածքի հրդեհամարման նպատակով տեղադրվելու է 25մ³ տարողության պլաստիկե ջրի բաք: Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով:

12.8 Սոցիալական. հանգստյան գոտու կառուցման շինարարության և շահագործման փուլերում բացվելու են նոր աշխատատեղեր: Ընկերությունը հանգստի՝ նոր արդիական ոճով և ժամանակակից հնարավորություններով ժամանացային հանգստյան գոտու կազմակերպմամբ ապահովելու է 65 նոր աշխատատեղերի ստեղծումը: Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում է նաև զբոսաշրջության հետագա զարգացման ռազմավարություն: Համալիրում կազմակերպվելու են քայլարշավ, հեծանվային տուր, ձիարշավ, յոգա: Ձիերը վարձակալվելու են Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներից, կնքելով պայմանագրեր բնակիչների հետ: Սա կխթանի նաև գործունեության տարածքին կից համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Ձիարշավը, քայլարշավը և հեծանվային տուրերը կազմակերպվելու են անտառպարկի տարածքում գոյություն ունեցող արահետներով՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի համաձայնությամբ:

12.9 Տարածքի բարեկարգում. գործունեության ենթակա տարածքը և հարակից տարածքներն արդեն մաքրվել են աղբից, քարերից, իրականացվել են ծառատնկման աշխատանքներ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու են.

- գործունեության ենթակա, ինչպես նաև հարակից տարածքների հարթեցում, բարեկարգում և կանաչապատում՝ համաձայն կանաչապատման նախագծի,

- շինարարական սարքավորումները հեռացվելու են տարածքից,

- տարածքը մաքրվելու է, վերականգնվելու է լանդշաֆտը,

- տնկվելու են ծառաթփեր, ծաղիկներ և նոր ծառեր,

- ծառատնկման և կանաչապատման աշխատանքները կատարվելու են անտառպարկի բուսականությանը բնորոշ տեսակներով,

- ստեղծվելու է կանաչապատ տարածքի ոռոգման անկախ համակարգ, որը կատարվելու է տարածքում տեղադրված տեխնիկական ջրի բաքից՝ վերգետնյա պոլիմերային խողովակաշարերով: Հավելված 6

Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատ ու	Վերահսկող
	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է. - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, - բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:	Կապալառու	«ԲԵՔՍԵՅՁ» ՍՊԸ «Արգելոցապարկ ային համալիր» ՊՈԱԿ
	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների	Կապալառու	«ԲԵՔՍԵՅՁ» ՍՊԸ

